ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/2884-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1193-18.11.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար: Քանի որ տեղական ավիաընկերությունների՝ իրենց կոդով ավիափոխադրումներ չիրականացնելու հանգամանքն է հանդիսանում այն հիմքը, որը սույն օրենքի իմաստով նախատեսվում է կարգավորել՝ նոր ուղղություններով չվերթեր իրականացնելիս ֆիզիկական անձանց համար պետական տուրքի արտոնությունից օգտվելու համար, հիմք հանդիսացած պատճառը, այն է՝ Եվրոպական միության թռիչքային անվտանգության ցանկում (սև ցուցակ) ընդգրկված լինելը, նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ըստ այդմ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածից հանել «Եվրոպական միության թռիչքային անվտանգության ցանկում (սև ցուցակ) ընդգրկված լինելու հետևանքով» բառերը:

Հարգանքով՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**